

## ՎԻԼՅԱՄ ՍԱՐԴՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԵՏ\*

«Կարծում եմ, արվեստի դերն այն է, որ թափա-  
ռումների ուղին բռնած մարդկությանն ապահովի լավ  
մշակված, հուսալի մի քարտեզով, որը նրան ցույց կտա  
դեպի ինքն իրեն տանող ճանապարհը»:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐԴՅԱՆ

«Արտասահմանյան շատ գրողների հետ եմ հանդի-  
պել, ադո, բայց ինձ վրա ամենամեծ տպավորությունը թողել  
է Վիլյամ Սարոյանը...

...Յոթանասունն անց այդ մարդը հրաբուխ է...

...Եթե շատ գրողներ մտածում են, թե իրենց գործերն  
ապագայում ինչ փառք կբերեն իրենց, ապա Սարոյանը  
մտածում է, թե իր գործերը կկարողանա՞ն ապագայում  
թեկուզև մի փոքր ազնվացնել աշխարհը...»:

ԱԼԵՔՍԱՆԴԵՐ ԶԱԿՈՎՍԿԻ

### ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

1976 թ. հոկտեմբերի 27, ժամը 12.00

Վիլյամ Սարոյանը Հայաստանում է: Երևանում գրողների, մտավորա-  
կանների հետ հանդիպելուց հետո, մեծ գրողը բուռն ցանկություն էր  
հայտնել այցելել Ամենայն Հայոց Հայրապետին՝ Տ.Տ. Վազգեն Ա  
Կաթողիկոսին: Իմանալով այդ մասին, ես հետախոսեցի «Էջմիածին»  
ամսագրի գլխավոր խմբագիր Արթուն Հատիտյանի հետ՝ խնդրելով, եթե  
կարելի է ու հնարավոր, ինձ իմաց անի Սարոյանի գալստյան մասին:  
Ուզում էի ունկնդիր լինել նրա ու Վեհափառ Հայրապետի գրույցին: Իմ  
ցանկությունը նա վերաբերվեց շատ քարյացակամ: Հատիտյանը ոչ միայն  
կոչվեց էր, այլև բարեկամ:

Եվ ահա 1976-ի հոկտեմբերի 27-ն է: Առավոտյան ինձ զանգահարում  
է Արթուն Հատիտյանը և ասում, որ իմ խնդրանքը կատարված է.  
Վեհափառ Հայրը համաձայն է:

Ես շտապում եմ Մայր Աթոռ: Ժամը 11.30-ն է, իսկ Սարոյանը  
Վեհափառի մոտ լինելու է ճիշտ 12.00-ին: Երբ մտա Մայր Աթոռի  
տարածք, Սարոյանը բանաստեղծ Վահագն Դավթյանի հետ շրջում էր,  
մոտենում մարդկանց, խոսում, հարց ու փորձ անում: Բիչ անց մեծ թվով  
մարդիկ հավաքվեցին նրա շուրջ: Մեկն ուզում էր պարզապես ի մոտ  
տեսնել, մյուսը հարցեր էր տալիս:

\* Այս հրապարակումը մի հատվածն է ճանաչված լրագրող և հրապարակախոս Վիլյիկ  
Զաքարյանի ծավալուն հուշագրության:

Վահագն Դավթյանը նայեց ժամացույցին: Պետք էր գնալ: Նրանք շարժվեցին դեպի Վեհարան: Ես քայլում եմ նրանց ետևից՝ չխանգարելով նրանց գրույցը: Սարոյանը, թվարկելով իր հայաստանաբնակ բարեկամներին, նաև ասում է. «Հայոց Կաթողիկոսն այ իմ բարեկամն է, ան շատ անուշ մարդ է: Անոր հետ զրուցելիս ես կհարստանամ: Ջարմանայի մարդ մըն է: Ինչի մասին կուզես՝ գրուցե. աշխարհի գրականություն, աշխարհի արվեստ, ֆրանսիական իմպրեսիոնիզմ, ռուսական գրականություն: Է՛, հապա հայ պատմություն, հայ կրոն, համաշխարհային պատմություն ու մշակույթ, հայ հին կրոններ, աշխարհքի կրոններ...»:

Է՛, շատ, շատ զարմանալի մարդ մըն է ան: Ե՞րբ հասցուցած է այդքան բան ուսանիլ, սորվիլ, կարդալ: Երբ կզրուցեի անոր հետ, կզգայի, որ շատ կարդացվոր եղեր է:

Է՛հ, մեծ, շատ մեծ Մարդ մըն է մեր Կաթողիկոս:

Ես անոր հետ զրուցելիս կզգամ բավականություն մը, ինչպես Կոմիտաս, Մոցարտ, Շոպեն լսեմ, ինչպես Օահմուրադյան լսեմ:

Է՛, անոր հայերենը: Անոր հայերենը գեղեցկություն է, գեղեցկություն: Է՛հ, երթանք, երթանք անոր քով»:

Իսկ այս տպավորությունները հենց այնպես չէին ծնվել: Նրանք հանդիպել էին առաջին անգամ 1960-ին, Վիեննայում: Հանդիպել էին և, ինչպես հայերն են ասում, երկուսի աստղերը բռնել էին. բարեկամացել էին, մտերմացել:

Վեհարանում Սարոյանին ընդառաջ է գալիս Ամենայն Հայոց Հայրապետը: Ջերմ, շա՛տ ջերմ ողջագուրվում են: Վեհափառը հրավիրում է նստել: Մտերմիկ զրուցում են: Վեհափառը հարցնում է նաև գալու շարժառիթը:

- Է՛հ, Վեհափառ, հրավեր ստացած էի Հայաստանի գրողներուն ընկերության և Սփյուռքահայերուն մշակութային կազմակերպության կողմն: Պարզապես հրավեր. այցելել Հայաստան: Իսկ ինչպես չայցելեմ: Հայրենիքս, իմ ժողովուրդը մազմիսին նման, տիեզերական ուժից այ վեր ինձի կքաշե դեպ իրեն:

Իմ ծննդավայրը Ամերիկան է, Ֆրեզնոն, ինչպես Ձերը՝ Ռուսանիան, Բուխարեստը: Բայց իմ իսկական հայրենիքը աս է: Իսկական հայրենիքս Հայաստանն է: Ատ այ քիչ է: Իմ իսկական հայրենիքը պապերուս հայրենիքն է՝ Բիթլիսը, Արմենակ Սարոյան հորս, Թագուհի Սարոյան մորս, Լուսնթագ Կարոյանյան մեծ մորս քաղաքը, որ արխո՛ւ, շա՛տ արխոս, այսօր Թուրքիո մեջ կգտնվի: Է՛հ, ի՛նչ բրած, ճակատագիր է:

Ի դեպ, ըսեմ, չկրցա զիս զսպել, տիեզերական ցանկությանս հակառակվիլ: Տարի մը առաջ գնացի Բիթլիս, տեսա, կարոտս առա:

Սարոյանը պատմում էր, որ Բիթլիսում մի տարեց քուրդ հիշել էր հորը, ցույց տվել իրենց տունը:

Հետո Սարոյանը շարունակեց.

- Թեկուզ ես հոն ծնած չեմ, բայց մեծ էր կարոտս: Գնացի, տեսա մեր՝

Մարդյանցների փոս եկած տունը: Նստեցի շենքին: Նստեցի ու նստեցի: Ինչքան էր անցեր, չեմ գիտեր, հետո ելա, գացի հյուրանոց: Ասեմ՝ կարոտս առա, սուտ կըլլա: Կարոտը սահման չունի, կարոտը տիեզերական է: Առաջին անգամ էի հայրենի քաղաքում, առաջին անգամ էի տեսնում հորենական տունը, այն էլ փյառակ, բայց մեծ, շատ մեծ կարոտ ունեի: Երևի կարոտը մարդու ամենամեծ զգացումն է:

- Ծիշտ ասացիր, Վիլյամ,- ասաց Վեհափառը,- իմ ծննդավայրն էլ Ռուսանիան, Բուխարեստն է, բայց իմ հայրենիքը Հայաստանն է, գեղեցիկ այս երկիրը:

Հետո նրանք հիշեցին իրենց հանդիպումը Վիեննայում, ապա տիրեց կարճ լռություն: Մարդյանն ինքն ընդհատեց այն:

- Վեհափառ, կհարցնեք Հայաստան գալուս շարժառիթը, չեք հարցներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին գալուս շարժառիթը: Կրոնը մեծ ուժ է, կրոնը ժողովուրդ կպահե: Երբ փոքր էի, Լուսնթագ մեծ մորս ձեռքերին առափոտ կանուխ ջուր կլցնեի, կլվացվեր: Լվացվելուց առաջ կաղոթեք, կխաչակնքեր: Կրոնը նաև ազգապահպանությունն է, իսկ Էջմիածինը, Մայր Աթոռը՝ ազգապահպանության կենտրոն:

Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետն ասաց, որ բերեն Մարդյանական մկերը: Մարդյանը սկզբում հրաժարվեց, ապա ինքն իրեն շտկեց.

- Ձեզմե ստացած մկերը մեծ, շատ մեծ պատիվ է ինձի համար ու մեծ պարծանք: Նվե՛ր Հայո՛ց Հայրապետե՛ն՛:

Այս վերջին նախադասությունը նա արտաբերեց վանկ առ վանկ ու շեշտված առոգանությամբ:

Բերեցին մկերը: Դա բյուրեղապակյա մի գավաթ էր՝ վրան Մայր Տաճարի փորագրանկարը: Տեսնելով մկերը, Մարդյանը հիշեց, որ Արարատը պատկերող մի մկար էլ ստացել է Մարտիրոս Մարյանից և ուր գնում, տանում էր հետը: Իսկ երբ ստացել է առաջին գրքի հոնորարը, նախ Սան Ֆրանցիսկոյում մի տուն է կառուցել Թագուհի մոր համար և ապա Ռուսաստանի վրայով եկել Հայաստան:

Ասաց նաև, որ առաջին անգամ Հայաստան է այցելել 1935-ին, հետո՝ 1960-ին: Այս մեկն արդեն երրորդն է: Ի վերջո հասկացել է, որ կտավի իսկական տեղը Սան Ֆրանցիսկոյում կառուցած տունն է, այն էլ իր աշխատասենյակը: Արարատը Հայաստան երկիրն է, իսկ Էջմիածինը՝ հայոց հոգու կենտրոնը: Էջմիածնի պատկերով այս գավաթը կտանի, կդնի Մարյանի մկարի կողքին: Հայոց ոգին ու հողը թող միանան իրար: Այն ժամանակ Վիլյամ Մարդյանն արդեն մեծակ չի լինի, մշտապես կլինի իր ժողովրդի հետ:

Չրույցից հետո, Վեհափառ Հայրապետի առաջարկով, Մարդյանը շրջեց Նոր Վեհարանում, հիացմունքով դիտեց Պատկերասրահի կտավները:

## ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

1978 թ. նոյեմբերի 2

Դեռևս 1976-ին Հայաստանից մեկնելիս, Սարոյանը Մոսկվայում կարճ հանդիպում ունեցավ խորհրդային առաջատար լրագրերից մեկի՝ «Լիտերատուրնայա Գազետա»-ի թղթակցի հետ: Այն հարցին, թե ե՞րբ է կրկին անգամ այցելելու Հայաստան, նա սարոյանական հանկարծազուտ ոճով ասաց. «Երկու տարի ետքը: Կուզեմ հայրենակիցներին հետ մեկտեղ դիմավորել մեծ տոնը՝ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը»:

Եվ ահա վիլյամ Սարոյանը Հայաստանում է: Այս անգամ ևս նա այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ շնորհավորելու Հայոց Հայրապետին ծննդյան 70-ամյակի առիթով:

Մտերմիկ գրույցի ժամանակ վեհափառ Հայրապետն ասաց, որ այս օրերին հայ ժողովուրդը տոնում է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու 150-ամյակը: Երկու ժողովուրդների բարեկամության մասին գրույցը շարունակվեց: Հետո վեհափառը հավելեց, որ այստեղից ոչ հեռու, վաղարշապատի այգիների մեջ, կառուցվել է հուշարձան-կոթող՝ նվիրված ոռոս զինվորի հիշատակին:

Ապա Հայոց Հայրապետը հիշեց, որ նաև Սարոյանի հորելյանն է, ու շնորհավորեց նրան:

Սարոյանը շնորհակալություն հայտնեց Նորին Արքույանը և ասաց, որ իր երկրորդ գիրքը, «Ենչառություն» խորագրով, որ լույս է տեսլ Նյու Յորքում 1936-ին, նվիրել է «Անգլերեն լեզվին, ամերիկյան հողին և հայկական ոգուն»:

Նրանք հրաժեշտ տվեցին միմյանց՝ վերստին հանդիպալու պայմանով:

Սարոյանը մեկնեց: Այս անգամ ևս նրան ուղեկցում էր բանաստեղծ վահագն Դավթյանը:

Նոյեմբերի 3-ին Երևանում, Կինոյի տան մեծ դահլիճում, նշվեց վիլյամ Սարոյանի ծննդյան 70-ամյակը: Դահլիճում ասեղ գցելու տեղ չկար: Հանդիսությունը հեռարձակվում էր հեռուստատեսությամբ, ինչպես նաև ռադիոյով: Մեծաթիվ մարդիկ էին հավաքվել դրսում և չէին հեռանում: Ստիպված բարձրախոսներ տեղադրեցին նրանց համար: Այդ օրն այնտեղ հնչեց նաև Ամենայն Հայոց վազգեն Ա Կաթողիկոսի խոսքը.

«ՄԵՇԱՏԱՆՂԱՆԴ ԳՐՈՂ ՎԻԼԹԱՄ ՍԱՐՈՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սուրբ Էջմիածնից ուրախ սրտով ողջունում ենք Ձեր կյանքի յոթանասուն տարիները՝ լեցուն փայլուն գրական ստեղծագործություններով, նվիրված մեր օրերի մարդկանց՝ ավելի արդար, ավելի խաղաղ ու ավելի

մարդասեր մի աշխարհի երազանքով: Այդ է նաև դարավոր երազանքը հայ ժողովրդի: Որով, այս իմաստով Դուք Ձեր ամբողջ վաստակով հարազատ արտահայտիչն եք մեր ժողովրդի ճշմարիտ իղձերի:

Հարգանք Ձեր կյանքին ու Ձեր վաստակին: Նաև մեր սրտից բխած բարի մաղթանքն է, որ դեռևս երկար տարիներ շարունակեք Ձեր գրական ստեղծագործական առաքելությունը՝ միշտ հիշելով Ձեզ սիրող և Ձեզանով հպարտացող Մայր Հայաստանը:

Մաղթում ենք նաև, որ Ձեր հեղինակավոր ձայնը միշտ բարձր հնչեցնեք աշխարհում՝ հոգուտ հայ ժողովրդի արդար սպասումների կենսագործման:

Աստծո լույսով թող միշտ վառ մնա լույսը Ձեր տաղանդի:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

2 Նոյեմբեր 1978 թ. »:

Սիրելի ընթերցող, խնդրում եմ ուշադրություն դարձնեք ճեռելյալ տողերին, ուր ասվում է, թե Սարոյանի փայլուն գրական ստեղծագործությունները նվիրված են «Մեր օրերի մարդկանց՝ ավելի արդար, ավելի խաղաղ ու ավելի մարդասեր մի աշխարհի երազանքով: Այդ է նաև դարավոր երազանքը հայ ժողովրդի: Որով, այդ իմաստով Դուք Ձեր ամբողջ վաստակով հարազատ արտահայտիչն եք մեր ժողովրդի ճշմարիտ իղձերի»:

Այստեղ ներառնված են թե՛ համաշխարհայինը, թե՛ համամարդկայինը, թե՛ խորապես ազգայինը: Թերևս վազգեն Ա վեհափառ Հայրապետի այս գնահատանքը ամենամեծն է երբևէ Սարոյանին տրված գնահատության բոլոր խոսքերից:

ՎԻԼԻԿ ԶԱՔԱՐՅԱՆ